ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԿԱՄ ԱՆԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ԱՅԼ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2015 թվականի մայիսի 18-ի թիվ 3 որոշմամբ - հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

ԱՐՏԱԿԱՐԳ ԿԱՄ ԱՆԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ԱՅԼ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ N ՀՀՌՑ-ԲԸՀԾՁԲ-15/1

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N307 սենյակ հասցեում, ստորև ներկայացնում է N ՀՀՌՑ-ԲԸՀԾՁԲ-15/1 ծածկագրով հայտարարված արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ պարզաբանումները:

Հարցադրում N 1: Հրավերի Հավելված 3-ով սահմանված Հայտարարությամբ հայտատուն պետք է հավաստի, որ ունի պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ «տեխնիկական միջոցներ»: Հաշվի առնելով, որ առկա չէ «ունի» բառի օրենսդրական սահմանում և այն կարող է ենթադրել տեխնիկական միջոցների տիրապետում տարբեր հիմքերով, խնդրում ենք պարզաբանել՝ արդյոք հայտարարությամբ հավաստում է տեխնիկական միջոցներին սեփականության իրավունքով տիրապետումը հայտատուի կողմից, թե այդպիսի միջոցների ներգրավման ունակության առկայությունը տվյալ պահին՝ վարձակալության, օգտագործման կամ սեփականությունից բացի այլ առկա իրավունքների հիման վրա:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 15.05.2015թ.:

Պարզաբանում N 1: «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3)-րդ կետով սահմանված է, որ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող տեխնիկական միջոցներ,

- ՀՀ կառավարության 10/02/11թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 66-րդ կետի 1)-ին ենթակետով սահմանված է, որ հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին,

- Կարգի 66-րդ կետի 2)-րդ ենթակետով սահմանված է, որ եթե հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա առաջին տեղը

զբաղեցրած մասնակիցը որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները,

- ՀՀ կառավարության 10/03/15թ. N 303-Ն որոշման 1-ին կետի 1)-ին ենթակետով սահմանված է, որ Օրենք 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3)-րդ կետով նախատեսված որակավորման չափանիշի պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով մասնակիցները նշված պահանջին իրենց տվյալների համապատասխանությունը գնահատելու համար ներկայացնում են միայն գրավոր հայտարարություն:

Հաշվի առնելով N 1 հարցումը և պարզաբանման համար ներկայացված գնումների մասին ՀՀ օրենսդրական հիմնավորումները հայտնում ենք, որ ընթացակարգի հրավերով չեն սահմանվել «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով համապատասխան պահանջներ, միևնույն ժամանակ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3)-րդ կետով, Կարգի 66-րդ կետի 1)-ին ենթակետով և ՀՀ կառավարության 10/03/15թ. N 303-Ն որոշման 1-ին կետի 1)-ին ենթակետով սահմանված պահանջներին համապատասխան ընթացակարգի հրավերով պահանջվել է, որ մասնակիցը տեխնիկական միջոցներ որակավորման չափանիշի պահանջներին համապատասխանության համար պետք է ներկայացնի միայն գրավոր հայտարարություն, մինչդեռ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով համապատասխան պահանջներ սահմանվելու դեպքում, առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ պետք է ներկայացներ այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս պետք է նախատեսեր օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պետք է ներկայացներ դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Հարցադրում N 2: Հրավերի Հավելված 4-ով սահմանված «Գնի առաջարկ»-ի ձևը պարունակում է «ինքնարժեք», «շահույթ» և «Առաջարկված ընդհանուր գին» դաշտերը: Հաշվի առնելով, որ Ընկերությունը (այդ թվում՝ Ընկերության խմբի այլ ընկերություններ) գործում է համամոլորակային ընդգրկում ապահովող 55 արբանյակներով և որ՝ Հրավերում նշված ծառայությունների նպատակներով ժամանակ առ ժամանակ օգտագործվելիք արբանյակները շահագործվում են նաև այլ ծառայությունների համար՝ Ընկերության համար տեսականորեն անհնար է որևէ ողջամիտ ճշգրտությամբ որոշել, թե Ընկերության ընդհանուր ծախսերի որ մասն է վերագրելի Հրավերում նշված Ծառայությունների նպատակներով պահանջվող հաճախականության տիրույթի հատկացմանը: Հաշվի առնելով, որ Հրավերը չի պարունակում որևէ նշում, թե արդյոք Հավելված 4-ով սահմանված «Գնի Առաջարկ»-ի բոլոր դաշտերը ենթակա են պարտադիր լրացման, թե ոչ, խնդրում ենք պարզաբանել արդյոք հնարավոր է և Հրավերի նպատակներով ընդունելի ու իրավաչափ կլինի, եթե Հավելված 4-ով սահմանված Գնի Առաջարկի մեջ նշվում է միայն ընդհանուր գինը, այն է լրացվում է միայն՝ «Առաջարկված ընդհանուր գինը» առանց «ինքնարժեք», «շահույթ» դաշտերը լրացնելու:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 15.05.2015թ.:

Պարզաբանում N 2: Կարգի 35-րդ կետի 2)-րդ ենթակետով և ընթացակարգի հրավերի II մասի 3-րդ կետի 3.2 ենթակետով սահմանված է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում՝ Մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Հաշվի առնելով N 2 հարցումը և պարզաբանման համար ներկայացված գնումների մասին ՀՀ օրենսդրական հիմնավորումները հայտնում ենք, որ մասնակիցը գնային առաջարկը պետք է ներկայացնի Կարգի 35-րդ կետի 2)-րդ ենթակետով և ընթացակարգի հրավերի II մասի 3-րդ կետի 3.2 ենթակետով սահմանված պահանջներին համապատասխան:

Հարցադրում N 3: Հրավերի Հավելված 6-ը կից պարունակում է լրացման ենթակա Վճարման պահանջագիր, որի իրավական բնույթը և հիմքը ընդհանրապես հասկանալի չեն: Վճարման պահանջագիրը իրավական հիմք որպես այդպիսին չունի: Այսինքն, անհայտ է, թե ինչի հիման վրա է ներկայացվում պահանջը: Փաստաթղթի բովանդակությունը և լրացման կարգը նույնպես անհասկանալի են: Մասնավորապես, Հրավերում առկա Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմաններին և կարգին համապատասխան Վճարման պահանջագրի ամսաթիվը չի լրացվում վճարողի կողմից այն ստորագրելիս, այլ միայն լրացվում է շահառուի կողմից՝ այն ներկայացնելու օրը: Այսինքն վճարողը ստորագրում է փաստաթուղթ՝ անհայտ ամսաթվով: Միևնույն ժամանակ, Վճարման պահանջագիրը ի կատարումն երկայացման ժամանակային սահմանափակում ընդհանրապես չունի: Որոշ դաշտեր, ինչպիսին է, օրինակ՝ «շահառուի բանկը», «շահառուի հաշվի համարը» անհայտ է, թե ով և երբ է լրացնում: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Ընկերության համար ողջամտորեն անհնար է այսպիսի թղթի ստորագրումը: Ուստի, խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք հնարավոր է նշվածի փոխարեն ներկայացնել բանկային կամ այլ երրորդ անձի երաշխավորություն՝ որպես Հայտի ապահովում և այն կհամարվի ընդունելի և իրավաչափ Հրավերի համաձայն բանակցային ընթացակարգին մասնակցելու նպատակներով: Բացասական պատասխանի դեպքում խնդրում եմ պարզաբանել, որ դաշտերն են ենթակա լրացման վճարողի, այսինքն գնման ընթացակարգի մասնակցի կողմից, ինչ ամսաթվով է ստորագրվում փաստաթուղթը և արդյոք հնարավոր ձևում սահմանել պահանջագիրը ի կատարում ներկայացնելու սահմանափակում:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 15.05.2015թ.:

Պարզաբանում N 3: Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով և ընթացակարգի I մասի 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

- Տուժանքի մասին համաձայնության նախագիծը ներկայացված է ընթացակարգի հրավերի N 6 հավելվածով, որի 1-ին կետի 1.1 ենթակետով սահմանված է, որ կից պետք է ներկայացվի վճարման

պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

Հաշվի առնելով N 3 հարցումը և պարզաբանման համար ներկայացված գնումների մասին ՀՀ օրենսդրական հիմնավորումները հայտնում ենք, որ տուժանքի մասին համաձայնությունը, ինչպես նաև կից ներկայացվող վճարման պահանջագիրը, որը սահմանված է նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված հրավերի օրինակելի ձևերով, ենթակա են պարտադիր լրացման և ներկայացման ընթացակարգի հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՝ Տիգրան Ջանոյանին:

Հեռախոս՝ (+37410) 58 05 23:

Էլ.փոստ՝ tjanoyan@transportpiu.am:

Պատվիրատու՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ: